# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 43-Ա

Արթիկ համայնք 28 օգոստոսի 2018թվական

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

***Հաստատել նիստի հետևյալ օրակարգը***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 105-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին. /զեկուցող՝ Մխիթար Վարագյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ առաջադրելու մասին /զեկուցող՝ Մխիթար Վարագյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից աճուրդային եղանակով Բաղրամյան փողոց 10/10 հասցեում գտնվող 0,027հա մակերեսով հողատարածքը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին /զեկուցող՝ Մխիթար Վարագյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից աճուրդային եղանակով Կայան փողոց 1/1 հասցեում գտնվող 550,0քմ մակերեսով հողատարածքը օտարելու և օտարման մեկնարկային գին հաստատելու մասին /զեկուցող՝ Մխիթար Վարագյան/

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Հակոբյան Տարոն | Հակոբյան Հարություն |
| Զոփիկյան Արտակ | Ղուկիջօղլյան Ռաֆիկ |
| Վարագյան Մեսրոպ | Վարագյան Արտաշես |
| Նիկողոսյան Արմեն | Գասպարյան Վաղարշակ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2018թվականի օգոստոսի 28-ի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44-Ն

Արթիկ համայնք 28 օգոստոսի 2018թվական

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 105-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՛

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 105-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

1) <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<10 517 900 տասը միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր >> դրամ թիվը և բառերը փոխարինել <<9 307 900 ինը միլիոն երեք հարյուր յոթ հազար ինը հարյուր>> դրամ թվով և բառերով:
2) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող) բաժնի <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> (4819) հոդվածում գրված <<2 775 000 երկու միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար >> դրամ թիվը և բառերը փոխարինել <<2 935 000 երկու միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար >> դրամ թվով և բառերով:
3) Արտադպրոցական դաստիարակություն բաժնի <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին>> (4511) հոդվածում գրված <<129 862 000 մեկ հարյուր քսանինը միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար>> դրամ թիվը և բառերը փոխարինել <<130 412 000 մեկ հարյուր երեսուն միլիոն չորս հարյուր տասներկու հազար>> դրամ թվով և բառերով:

4) Մշակութային ծառայություններ (գրադարաններ) բաժնի <<Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին>> (4511) հոդվածում գրված <<19 043 000 տասնինը միլիոն քառասուներեք հազար>> դրամ թիվը և բառերը փոխարինել <<19 543 000 տասնինը միլիոն հարյուր քառասուներեք հազար>> դրամ թվով և բառերով:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Հակոբյան Տարոն — Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ — Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ — Վարագյան Արտաշես

Նիկողոսյան Արմեն — Գասպարյան Վաղարշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝_______________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,

2018թվականի օգոստոսի 28-ի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 45-Ա

Արթիկ համայնք 28 օգոստոսի 2018թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 51-Ա որոշմամբ հաստատված կանոնադրության 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի կողմից առաջադրել 2018թվականի օգոստոսի 9-ի մրցույթին հաղթող ճանաչված Լիլիթ Մուշեղի Հաջաթյանին:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Հակոբյան Տարոն | Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ | Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ | Վարագյան Արտաշես

Նիկողոսյան Արմեն | Գասպարյան Վաղարշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝______________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2018թվականի օգոստոսի 28-ի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 46-Ա

Արթիկ համայնք 28 օգոստոսի 2018թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 10/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,027ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աճուրդային եղանակով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Բաղրամյան փողոց 10/10 հասցեում գտնվող 0,027հա մակերեսով հողատարածքը՝ /կադաստրային ծածկագիր 08-002-0040-0176/ հասարակական սպասարկման տարածք օգտագործելու նպատակով:

2.Օտարման մեկնարկային գին հաստատել 1քմ-ի համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Հակոբյան Տարոն Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ Վարագյան Արտաշես

Նիկողոսյան Արմեն Գասպարյան Վաղարշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝______________ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,

2018թվականի օգոստոսի 28-ի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ա

Արթիկ համայնք 28 օգոստոսի 2018թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 550,0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Աճուրդային եղանակով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Արթիկ համայնքի, Կասյան փողոց 1/1 հասցեում գտնվող 550,0քմ. մակերեսով հողատարածքը՝ /կադաստրային ծածկագիր 08-002-0061- / բնակելի տուն կառուցելու համար:

2. Օտարման մեկնարկային գին հաստատել 1քմ-ի համար՝ 528 դրամ:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Հակոբյան Տարոն — Հակոբյան Հարություն

Զոփիկյան Արտակ — Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ — Վարագյան Արտաշես

Նիկողոսյան Արմեն — Գասպարյան Վաղարշակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝________________Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Արթիկ համայնք,
2018թվականի օգոստոսի 28-ի